## Արձանագրության 3

**Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11 փողոցի 20 և 21 շենքերի աջակողմյան հատվածում գտնվող ձորակում աստիճանավանդակների և ճաղավանդակների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-19/53 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

20.06.2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սարգսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Ա. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/

Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝

### 1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/53» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը նախագահողի մասին

Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինությունը՝ նիստը նախագահեց հանձնաժողովի անդամ Ա. Հարությունյանը՝ համաձայն գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի /այսուհետ՝ Կարգ/ :

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:*

### 2. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

Ընդունել ի գիտություն որ.

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:*

### 3. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:*

### 4. ԵՔ-ԲՄԾՁԲ-19/53 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-19/53» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 11 փողոցի 20 և 21 շենքերի աջակողմյան հատվածում գտնվող ձորակում աստիճանավանդակների և ճաղավանդակների կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ - 0:*

## 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

---

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:*

Հանձնաժողովի

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Սարգսյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան